

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1996թ. հունիսի 18-ին, Աթենքում:

Ստորագրող կողմերն են ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- խորհրդատվություն նպատակով փորձագետների, մասնագետների, գիտնականների փոխադարձ այցելություններ,
- ուղղակի համագործակցություն գիտահետազոտական հաստատությունների, հիվանդանոցների միջև,
- տեղեկությունների, առողջապահական, վիճակագրական տվյալների, համաճարակաբանական հաշվետվությունների փոխանակություն,
- համագործակցություն բժշկական հրատարակչությունների միջև,
- փոխօգնություն միմյանց տարածքում գտնվող երկու երկրների քաղաքացիներին սուր և անհետաձգելի դեպքերում բուժօգնության տրամադրման հարցերում: